ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱԾԾՁԲ-22/24 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.01.2022թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.eauction.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Անի Թադևոսյան
Հանձնաժողովի անդամ՝ Արա Հակոբյան
Հարություն Մարտիրոսյան
Ռազմիկ Օհանյան
Գագիկ Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԷԱԾԾՁԲ-22/24 ծածկագրով գնման ընթացակարգի իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ |
| 2 | Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ |

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ | | Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ | |
| | | Առանց | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 41 292 000 | 33 000 000 | 39 600 000 | 32 000 000 | 38 400 000 |

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ իրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է իրավերի պահանջներին համապատասխան:

4.2 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են իրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.3 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում իրավերով սահմանված պահանջներին մասնավորապես՝ բացակայում է իրավերի 4-րդ բաժնի 4.3 կետի ե/ պարբերությամբ սահմանված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**5. Գնահատման գործընթացի կասեցման մասին**

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.3 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ հունվարի 14-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.01.2022թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Անի Թաղևոսյան |
| Հանձնաժողովի անդամ՝ | Արա Հակոբյան |
| | Հարություն Մարտիրոսյան |
| | Ռազմիկ Օհանյան |
| | Գագիկ Սարգսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Անուշ Մարգարյան |

**6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

6.1 <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0***

**7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.**

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0***

**8.Գնահատման արդյունքների մասին**

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-ր օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխա ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0***

Գնահատող հանձնաժողով՝

---------------- Անի Թադևոսյան /նախագահ/

---------------- Արա Հակոբյան

---------------- Հարություն Մարտիրոսյան

---------------- Ռազմիկ Օհանյան

---------------- Գագիկ Սարգսյան

---------------- Անուշ Մարգարյան /քարտուղար/